ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 5
ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 10.01.2020թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս Աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, մի կողմից, և ֆիզիկական անձ՝ Էդվարդ Կարապետյանը (այսուհետ՝ Անձ), մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հաշվի առնելով Անձի կողմից կատարվող աշխատանքի առանձնահատկությունները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Աշխատակազմը պարտավորվում է Անձին տրամադրել դրամական աջակցություն (այսուհետ՝ Աջակցություն) Հայաստանի Հանրաետության Ազգային ժողովի նախագահի համապատասխան կարգադրություններով սահմանված ժամկետներում և չափով:
2. Աջակցությունը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ սույն համաձայնագրի 6-րդ կետով նախատեսված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:
3. ՀՀ Ազգային ժողովի նախագահի կարգադրությունում Անձի անունը չներառվելու դեպքում Աշխատակազմն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Անձին: Սույն կետով նախատեսված ծանուցման գրավոր ձևը համարվում է պահպանված նաև սույն համաձայնագրի 6-րդ կետով նախատեսված էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելիս:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 31.12.2020 թվականը:
5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
6. Կողմերի հասցեները և վավերապայմանները.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ	Ֆիզիկական անձ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 19	Հասցե՝ Էլ. հասցե՝ Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ՝ 1150014630700725
Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար	
Տ.ԳԱԼՍՏՅԱՆ	ԷԴՎԱՐԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ